ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«24» մարտի 2014թ.

Հարգելի Մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված համապատասխանաբար շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանքները:

Սույն հրավերի ծածկագիրն է՝ << ՄՔ-ՇՀԱՊՁԲ-11/22-14/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել քաղաք Մարալիկ, Մաղաթյան 1, Մարալիկի քաղաքապետարան, 2-րդ հարկ հասցեով մինչև 2014թ. Ապրիլի 3-ը, ժամը 12:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար , Սաթենիկ Զաքարյանը:

Հայտերը կբացվեն քաղաք Մարալիկ, Մարալիկի քաղաքապետարանի շենքի 2-րդ հարկում, Մաղաթյան 1 հասցեով, 2014թվականի ապրիլի 3-ին, ժամը 12:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար՝ սեղմված բնական գազի ձեռքբերումը:

Մարալիկի քաղաքապետարանի կարիքների համար՝ սեղմված բնական գազի (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալներն և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերով (ծանուցմամբ):

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումն և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/22 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մարալիկի քաղաքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ maralik.shirak@mta.gov.am:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Ս. Զաքարյան
Հեռ.՝ 0-94-68-74-55
Էլ. Փոստ՝ satenzakaryan@mail.ru